ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 171 - Ա
03 հոկտեմբերի 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ 25-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ՝<<ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ >> ԽՈՐԱԳՐՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՄՈՒՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ 7-ՐԴ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Մշակութային օրենսդրության հիմունքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով՝

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում Արցախյան ազատամարտի 25-ամյակին նվիրված՝ <<Լեզու և հայրենիք>> խորագրով հանրապետական ասմունքի մանկապատանեկան 7-րդ մրցույթ-փառատոնի տարածքային և մարզային փուլերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում Արցախյան ազատամարտի 25-ամյակին նվիրված՝ <<Լեզու և հայրենիք>> խորագրով հանրապետական ասմունքի մանկապատանեկան 7-րդ մրցույթ-փառատոնի տարածքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում Արցախյան ազատամարտի 25-ամյակին նվիրված՝ <<Լեզու և հայրենիք>> խորագրով հանրապետական ասմունքի մանկապատանեկան 7-րդ մրցույթ-փառատոնի տարածքային և մարզային փուլերի հայտի ձևանմուշը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Կազկոմիտեին/ նախագահ՝ Գ. Բադալյան/.

1) կազմակերպել մրցույթ-փառատոնի մարզային փուլի բացման և փակման հանդիսավոր արարողությունը.
2) մրցույթ-փառատոնի ավարտից հետո ներկայացնել գրավոր հաշվետվություն:

3.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝
1) մինչև ս/թ հոկտեմբերի 18-ը դպրոցներում կազմակերպել և անցկացնել ասմունքի մրցույթ-փառատոնի ներդպրոցական փուլը՝ ապահովելով դպրոցականների զանգվածային մասնակցությունը.
2) տարածքային փուլի հայտերը ներկայացնել համապատասխան տարածքային փուլի կազմակերպիչներին՝ մինչև ս/թ հոկտեմբերի 22-ը:

4. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս.Խլղաթյանին՝ ապահովել մրցույթ- փառատոնի մարզային փուլի հաղթողներին պարգևատրելու համար շնորհակալագրերի և հուշանվերների ձեռքբերումը՝ համաձայն N 4 հավելվածի:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ